

գիտեր զառաքինական ընթացս կենաց նորա, նմին իրի յետ մահուան Խաչկայ զնա ետ ձեռնադրել **Կաթողիկոս (992. ՆԻԵ):**

Սա ինքն **Տէր Սարգիս** ունէր զմարդասէր և զքաղցր բարս, և էր խոնարհ ի կենցաղավարութեան և խոհեմ ի կառավարութեան, միանգամայն ձգնազղեաց և աղօթասէր. զի զոր ինչ կարդ պահոց և աղօթից ունէր ի վանականութեան իւրում, զնոյն պահաց անխափան և ի կաթողիկոսութեան:

Եյս շայրապետ գտեալ զնշխարս ինչ սրբոց **Հռիփսիմեանց**, շինեաց եկեղեցի յանուն նոցա առնթեր **Կաթողիկէին Ենեոյ:** Ի սորա յաւուրս ծաղկեցաւ Ստեփաննոս **Վարդապետ Տարօնեցի Եսողնիկ** կոչեցեալ պատմարան:

Ի չորրորդ ամի **Կաթողիկոսութեան Տեառն Սարգսի**, ի **Վեկա**. ամսոյն եղև գետնաշարժութիւն սարսափելի և աւետաց ամիսս եօթն (995), և եղին քանդմունք մեծամեծք, զորմէ զրէ **Եսողնիկ:**

Յայտ է թէ, յայսմ շարժմանէ քայքայեալ և աւերեալ է սուրբ **Յարութեան Տաճարն Ալվանու**, որոյ այժմ միայն զազաչի որմունքն տեսանին, որք ունին զնշան հնազոյն շինուածոց: **Նոյնպէս** և սուրբ **Պարապետի** մատուռն խարխալեալ, որ յետոյ բարեպաշտ ժողովուրդ **Վեղարքունեոյ** զմբէթաւոր յօրինուածով վերականգնեալ են, ըստորում նախնական յիշատակ Իշխանաց և Տեարց իւրեանց էր:

(Ըարոնաիւլ)

ԱՅՐԻՎԱՆՔ

ՊԱԹ

Գ Ե Վ Ե Ր Գ Ե Յ Վ Ա Ն Ք

շայաստանի հնազոյն և երևելի վանքերէն մինն է **Եյրիվանք** կամ **Եյրից վանք**՝ այժմ **Վեղարդայ վանք** կոչեցեալ:

Հանդերձ ճարտարագործ միանգամայն զարմանալի փորուածքներով ժայոից մէջ՝ ունի մենաստանս արժանի ուշադրութեան պատմական կարևոր անցքեր և կը պարունակէ հետաքրքրական արձանագրութիւնք՝ զորս տեղագրութեան հետ արժան կը համարիմ հաղորդել ցանկացողաց:

Հաւանական է, զի մեր երկրորդ **Լուսաւորիչ Ս. Գրիգոր Պարթևի** օրերով շինուած է այս վանք, և զուցէ **Տրդատ Թաղաւոր** կառուցանել տուած լինի զայս՝ հոգւոյ փրկութեան անձկանօք ի խորշս վիմայ և ի լերինս առանձնասէր կեանք վարելու եռանդ ունեցող ձգնաւորաց համար, որ շատ յարմարութիւնք և դիւրութիւնք կը պարունակէ տեղը:

Վուցէ, զառաջինն՝ մի այբի մը փոքրիկ եկեղեցի փորուած լինի, ուստի կոչուած է **Եյրիվան+** կամ **Եյրից վան+**:

Ի հնուց հետէ, զրիթէ միշտ անուանի՝ բարեհամբաւ և պայծառաշէն եղած է այս վանք. յորում **Վրիգոր Լուսաւորիչ** — ինչպէս աւանդութիւն է, — Մեծն **Ներսէս շայրապետ**, **Իսահակ Պարթև** և **շայրապետ**, **Յովհաննէս Զ Կաթողիկոս** **Վրասխանակերտցի**, **Ստեփան Կաթողիկոս Եզուանից**, **Գրիգոր Ժ Կաթողիկոս** ինչպէս և ի 1869 թուին **Գեորգ Վ. Կաթողիկոս** և



այլ բարձրաստիճան Աշխեղեցականք մերթ ընդ մերթ աստ բնական են թէ առանձնական կենաց և մշտամուռնչ աղօթից անձկանօք, թէ այցելութեամբք, թէ օգափոխութեամբք, և թէ բռնաւորաց ձեռքէն ազատ և ապահով մնալոյ աղաղաւ, նաև մեր թաղաւորքը և՛ իշխանքը և՛ այլ շրջակայ բնակիչք շատ անգամ հինից և անաղորոյն թշնամեաց ասպատակութիւններէն և սրախողխողութիւններէն և զերութենէ փախչելով իբրև յամուր բերդս ապաստանարաններ կը յօրինէին ինքեանց այս վանուց բոլորտիքը. և արգարև են այնպիսի այրեր՝ խորշեր և պատասպարաններ, որք ամենևին անմերձենալի են թըշնամեաց, և այնպիսի անառիկ դիրքեր ունին, որ ի պաշարման անգամ՝ սուտա պաշար ունենալ բաւական է՝ պաշարող թըշնամեաց յուսահատութիւն պատուել և ի բաց հեռացուցանել զնոսա: Աոցա ոմանց վերայ զխտարաններ ևս եղած են, և ինչ էս յաւանդութեանց ցանկացայլսել, որոց վերայ դէպտ կարգապահութեամբ սպասելով՝ շուրջանակի կը դիտեն հեռաւոր վայրերը և ճանապարհները, որպէս զեթնամեաց մի խումբ երևելով՝ իսկոյն ձայն տան և բնակիչք հաւաքուին ու պատըսպարուին ի նոսին:

Արբեմն Հայրապետք մեր, և մերթ հոյակապ իշխանք առանձինն հոգեռանդ սէր և խնամք տածած են վանուցս վերայ. որով հեռզհեռէ այլ և այլ վիմափոր և հիւսուածոյ եկեղեցեօք և մատուռներով պայծառացած է, և այլ և այլ կարևոր շինութեամբք զարդարուն հանդիսացած: Ի՞նչ է մեր Հայրենեաց՝ Հայաստանի բազմադէտ և դառն անցից մասնակցելէ զուրկ

մնացած չէ, և ոչ սակաւ անգամ ամայացած, բայց և այնպէս միշտ հարազատ պաշտպաններով կրկին նորոգուած և շքեղացած և երևելի և արդիւնաւորութատեղի եղած է:

Ե. յս մենաստան զառաջինն աւերեցաւ և կողոպտեցաւ. Ասր ոստիկանի զօրքերէն յամին 923:

Վերջին աւերումը վերանորոգեցաւ 1834 թուին՝ հրամանաւ Յովհաննէս Ը Աթողիկոսին Աարբեցւոյ ի ձեռն Յովհաննէս շուշտակ վարդապետի:

Արբեմն աստ պահուած է Ս. Գեղարդն Փրկչին, ուստի և ի յիսին ժամանակս առաջին Ե. յրէվանն անունը փոխուելով Գեղարդոյ վանն կոչել սովորութիւն եղած է:

Ըստ ուսումնական մասին՝ Հայ դրականութեան փառք տալոյ և անուանի հանդիսանալոյ արժանի յիշատակք չերևին այս վանուցս անցիլոց մէջ՝ ինչպէս զժբաղդաբար և ի ներկայս: Գուցէ ի հնումն ունեցած լինի մի վարժարան Միարանից համար, բայց կղժուարանամք՝ կամ լաւ ևս ասելով՝ չեմք կարող գտանել ուսեսոյ և արդիւնաւոր մի պտուղ յառաջացած՝ բաց ի Ե. յրիվանեցի Մխիթար Վարդապետէն, որ Ժ. Գ. դարու մէջ ծաղկեցաւ և էր միարան Ե. յրիվանից, բայց հաստատ չգիտեմք՝ թէ ճշր ուսումն առաւ: Վաննորոյ մեր հետազօտութիւնը Ե. յրիվանից վերայ տեղադրութեամբ միայն պիտի բաւականանայ *):

(*) Ա. յժմ Աթողիկոսը մի վարժապետ կարգեց, որ մերձակայ Աողթ գեղ քահանայի և այլ աղքատեաց որդիք կրկարդան՝ տիւ և զիշեր մնալով անդ. և այս տարի նիւթերը կը պատրաստուին, յառաջակայ տարին մի վարժարան շինել տալոյ համար անդ:


Տ Ե Ղ Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՅՐԻՎԱՆՈՒՑ

ԵՒ ԱՐՉԱՆԱԳԻՐՈՒԹԻՒՆՔՆ

Առաջից գաւառին մէջ մերձ ի սահմանս
Պեղարքունւոյ՝ իբր մի և կէս ժամ՝ Պառ-
նւոյ հիւսիս. արևելեան կողմէն հեռու՝

Պեղայ անցաւախիտ լեռին արևմտեան
ստորոտը, ինչպէս կերևի պատկերիս մէջ,
Պառնւոյ ձորոյն գրեթէ սկսուած տեղը.




Պեղարգայ վանք.

ահագին լեռամբք ու բլուրներով շրջա-
պատեալ է Այրիվանքը, որոյ արտաքին
հարաւ. պարսպէն իբր Ա—Յ. քայլ իրացեայ
զառնթափ ի լեռանց և ի բլրոց իջանելով
և կարկաչելով կը սահի և կանցնի գետակն
Պառնւոյ:

Պարիսպը քառակուսի ձևակերպու-
թիւն ունի. որոյ արևմտեան կողմը փոքր
ինչ ի շեղ սրացած՝ մենաստանիս դէպ ի
մէջ բաշացած բարձր ու սեպացած մեծ
վիմին կից է: Հիւսիսային որմը վիմուա
բարձր առապարի վերայ հաստատուած է.

իսկ միւսները ցածուն են: Արկու գուռունի վանքս, մեծն ընդ հարաւ սեպացած վիմին մերձ արեւմտեան կողմն՝ լայն ու խաչազարդ, և միւսն անձուկ՝ ի գետակն ելանելոյ արեւելեան կողմը:

Արեւելեան պարսպին ի ներքոյ, ինչպէս կերեի տեղագծիս մէջ, կան մատանատուն, սենեակք ծառայից, և այլ հարկաւոր իրաց պահարանք. նոյն պարսպին դէպ ի հարաւ ծայրէն սկսած՝ հարաւա-



Տեղագիծ Վեղարդայ

յին պարսպին վերայ՝ վանահօր և միաբանից և ուխտաւորաց սենեակք, լուսարան, հացարան, թոնիր, կթարան և ին. իսկ արեւմտեան պարսպին հիւսիսային անկիւնէն սկսեալ դէպ ի ներքս են ախոռներ, և այլ դարանք:

Առթն եկեղեցիք կան մենաստանիս մէջ, որ հիասքանչ յօրինուածովք շինուած են. զորս հասարակօրէն Եօն եկեղեցի կոչելու սովորութիւն եղած է, և միանգա-

մայն 40 մատուռ ու պատարագելոյ խորան ունի:

Ի վանուց ի ներքս մտանելով՝ ընդառաջ կը գայ բոլորովին կոփածոյ քարերով հիւսուած և կառուցուած մեծ եկեղեցին, ուր սովորաբար կը կատարուի ժամերգութիւն, որ և բաժանեալ է ի ժամատուն և ի Տաճար: Տաճարն առանց սեանց բարձրացած է սրածայր կաթողիկէով: Չորս անկեանց մէջ կը բկ-

նայարկ աւանդատուներ կամ աղօթատուներ կան սիւններով զարդարուած: Երեւելեան անկեանց՝ այսինքն Եւազ խորանին (սեղանին) երկու կողմը գտնուած աւանդատանց վերնատուներուն դռները սեղանոյ վերայ են. իսկ դիմացի՝ այս է՝ արեւմտեան դրան երկու կողմանց անկեանց մատուանց վերնայարկաց կը մտանուի ընդ որմն հիւսուած քարեայ նեղ սանդուղքներով*):

Եւազ խորանի կիսակամարին (ի ներքուստ) հիւսիսային պատին վերայ ինչպէս և ի հարաւայինն կան արձանագրութիւնք: Հիւսիսայինը՝ տասն կտոր մեծ և փոքր քարերու վերայ՝ տասն և երկու տողով փորագրուած է: Առաջին տողին նայելով՝ իբր և մատնաչափ՝ երկայնութեան եղբրքներէն տաշուած է գուցէ վերանորոգութեան առիթով, որով՝ նա և շատ տեղեր մաշուած ու անյայտացած լինելով՝ հազիւ հազ և բազում դժուարութեամբք և ջանիւք կարողացայ ընթեռնուլ ստորև տպուածը: Իսկ հարաւայինը հինգ տող բայց բաւական դիւրնթեռնելի էր, թէև ի վերջոյ պակաս ունէր, որ ևս գուցէ կտրուած լինի ի վերանորոգութեանն:

(*) Յորս ի հնումն իշխանազուք կամ իշխանուհիք Հայաստանի կաղօթէին, և երբեմն այնպիսի տեղեր յատկապէս շինել կը տային իշխանք մեր և իշխանուհիք, և ուրիշ ազգի ազգի ընծայարեութեամբք և կտակներով ուխտք և դաշինք կը կրէին վանօրէից հետ և կը հաստատէին, որպէս զի երեւելի և նշանաւոր տաղաւարաց և այլ տօն աւուրց մէջ յատուկ Ս. Պատարագներ և պաշտօնք մատուցանեն վասն փրկութեան հոգեոց իւրեանց կենդանեաց և նշնցելոց: Եւ այսպիսի մատուաներ և աղօթատուներ Հայաստանի մի քանի անուանի վանօրէից ինչպէս Հատիճոյ՝ Յովհաննավանուց և ըն. մէջ կան:

Եւ հաւաստիկ հիւսիսայինը
 «Շ նորհիւն Եստուծոյ ես Պռոշ իշխան() որդի Վասակայ յազգէ Հաղբայկայ() դանձայգին արարի ի տերանց աշխարհիս սուրբ ուխտս Եւրի վանս լերամբ և դաշտաւ և ամենայն կազմութեամբ որ կայր ի սմա և աճառապ ոսկի և արծաթ ի խաչ և պահարանի իկ ուսվարք և քշոցս() և շինեցի եկեղեցիս() և կանդնեցի սուրբ նշանացս ի գերեզմանացտունն ինձ և ազգի իմոյ յաւիտեան() և ետու ի սպասաւորութիւն սրբոցս . . . ի հալալ Գանձայգին գեղն() զՈղջաբերդ() զԵրզնայի և ԺՈՒ սպ: Եւ յլ եթէ որ յիմ յազգէ կամ յաւտարաց զիմ ոսկով գնած հայրենիքս ի այս սրբոցս հասնել ջանայ զինչ և իցէ պատճա զիմ անդարձ ապշոյղք արձանի հանել պեցի() այնպիսին . . . Եստուծոյ . . . ըրդութեանն Խ . . . ի տարին անխափան կատարի . . . պարոնի Պոո . . . , *):

Հարաւայինն է:

«Պամուսն Եստուծոյ ես Հասան որդի Վաղթանկայ թոռն մեծի Սմբատայ թաւաւորազին միսրանեցաք սուրբ ուխտիս և ետու պատուական Եւետարան . . . և տաւանկան() և սպասաւորք սորա խոստացան ի տարւոջն Ժաւր պատարագ Օատկին, Ե ինձ, Գ իմ մաւրն՝ Եանա-

(*) Սոցն արձանագրութեան ներքև մի կարգ շարուած հինգ կտոր քարից վերայ կրկին արձանագրութիւն կը նշմարուէր, որոյ թէպէտ սկզբնաւորութեան մի քանի բառեր կը դիտուէին, բայց շատերը այնքան մաշուած և քերուած էին որոգիմն, զի անհնար եղաւ վերծանել:

յ, յին, Ի Ռուզուքանայ կենակցի իմոյ (.)
 յոր խափանէ (.) ՅԺԲ. Հայրապետաց
 յնդովեա . . . :

Երտաքուստ հարաւային պատին վերայ
 հարաւային դրան կամարին արեւմտեան կող-
 մը արձանագրուած է հետեւեալը ինն թիզ
 երկայնութեամբ և երկու և կէս լայնու-
 թեամբ գրեթէ հինգ տողով :

Ի թաղազնոյն և աշխարհակալ Եթա-
 րակ և Իւանէի և արեան հարապատի
 յիւրոյ տիեզերակալին Չա . . . ադ Սարգ-
 սի ամիր սպասալարին և որդւոյ նորին
 Սււազին և Շահրնշահի (.) որ էառ ի
 Սայենով և Պայծանով մինչ ի . . .
 ի յԵկանաց և մինչ ի Վախճուան և ան-
 տի մինչ ի Պամնառխան . . . յ . . . աւդ-
 նութեամբն (.) և ապա եկի ի սուրբ
 յուխտս ի յԵ. յ . . . եկեղեցիքս և զսուրբ
 յքրս (.) և անոշ թուեցաւ յիմ անուն
 յարարի զեմ յիշատակաւ վերագրեցի և
 յետ . . . Իւերդ . . . ազն սուրբ Պաթողի-
 կէիս լուսացու (.) և ոք որ հակառակի
 յիս (.) սեւրեսս դայ և յերից սուրբ
 յժողովոյն նդովեալ . . . ՅԱՅ. ամէն *) :

Նոյն դրան կամարին ձևին պատշաճ
 ծաղկեայ շքանակին վրայի պատուհա-
 նին զլուխը գանու ամ քարին վերայ քան-
 դակուած է մի առիւծ, որ մի ցուլի վե-
 րայ ելած է և իբր զլսի կողմէն կամի պա-
 տառել զայն :

Գրան վերայ արձանագրեալ է, որ բա-
 ւական զժուարութեամբ հետեւեալը հա-

(*) Այս արձանագրութեան քարերը կերևի
 թէ վերանորոգութեան առիթներով խախտուած
 են, որ չորս տողից ի վերջաւորութեան տառեր կը
 պակասին. նաև մէջէմէջ մի քանիքը անպերձանկի
 կը գտնուէին :

զիւ քաղուած է, թէ և կրկին ոչ աւանց
 սխալանաց, և ի տեղիս տեղիս բառերը ան-
 հասկանալի են :

Վաման Եստուծոյ ես Սողոմոն թա-
 ղայից զԿէլիթիկի աղբէն թափխտու և
 նորոգեցի զՊաթողիկէս յիշարակ ինձ և
 թաղային երկ Սաւթեանին և տմուանին
 իմոյ Գարեշմանէն և որդոյն իմոյ Պաշխա-
 նասէն եղբարցն իմոց Չալին և Չաւրա-
 պին ամուսնուն իմոյ զինադնորդ թա-
 ղային և հանգուցելուն ի Բրէխտոս Պա-
 պին նութեկն թշ սորբ Գեղարզն (.) և
 ետու զխարժ նորհնագզան :

Թվ. ՌՆՂ. գահսան :

Սորա ներքե՛ կամարին կտրութեամբ
 քանդակուած է :

Վաման Եստուծոյ ես Տիթորս միա-
 րանեցայ սուրբ ուխտիս (.) ետու Ն՛. Գ. հ.
 յխոստացան Եւ ար ժամ :

Վերոյիշեալ պատուհանին ներքե վեր-
 ջին վերանորոգութեան թուականը կայ
 Միքայէլ վարդապետի անուամբ, որ բաւա-
 կան արդիւնաւոր եղած է այս վանուցս
 համար ըստ նիւթականին :

Շնորհիւ ամենազօրին Եստուծոյ եր-
 րորդ անգամ նորոգեցան տանիքն Ե. յրի
 վանիցս սուրբ Գեղարզայ հանդերձ երկո-
 քումը գմբէթիւք, արդք Լուսաւորչեան
 Հայոց ժողովրդականաց և բաղմաջան
 աշխատութեամբ Վանահորն Միքայէլ
 վարդապետի Չարոեանց Տփխխեցւոյ.
 որև գնեաց յօգուտ վանիցս
 զՎողար զիւզն ընդ միոյ ջար-
 ղայի : Ի թիվ. ՌՅԵ. յամի Տեառն
 1855 :

(Մնացեալն է յետագայս)